



Հուլիսի 15-ին մարդաշատ էր Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու գավիթն ու բակը: Կիրակնօրյա Սուրբ պատարագի եկած ժողովուրդը միմյանց շնորհավորում էր Վարդավառի տոնի կապակցությամբ:

Հայոց ավանդական տոնակարգում Վարդավառն ամառային ամենամեծ տոնն է, որը գալիս է հազարամյակների խորքից: Նախաքրիստոնեական Հայաստանում այն կապվում էր սիրո եւ գեղեցկության դիցուհի Աստղիկի հետ: Քրիստոնեության ընդունումից հետո տոնը արտաքին ուժերի նկատմամբ պաշտպանության

է ենթարկվել, սակայն պահպանել է

իր

էությունը
:

Եկեղեցին

այն

փոխարինում

է Քրիստոսի

Այլակերպության

կամ

Պայծառակերպության

տոնով, որն, ը

ստ

Ավետ

արանի

տեղի

է

ունեցել

Թաքոր

լեռան

վրա:

.

Սա

եկեղեցական

5

տաղավար

տոներից

մեկն

է,

նշվում

է

մեծ

շուքով

եւ համարվում է

ընտանեկան

տոն:

Սակայն

նաև

այն

բնակավայրերում

,

որտեղ

Վարդավառը

հատուկ

չի

նշվում

,
պահպանվել է
ջրցանության
սովորույթը

,
որը
գալիս
է
դեռևս
հեթանոսական
ժամանակներից

:



Եվ ահա հավարտ կիրակնօրյա Սուրբ Պատարագի,, Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի համակարգող Լեւոն Զիդիյանը հայտարարեց «Վարդավառին» նվիրված տոնակատարության սկիզբը: Ու տարածվեց երգն ու երաժշտությունը, ուրախ պարն ու «Վարդավառին» հատուկ

ջրցանությունը: Ու ցողվում էր վարդավառյան ջուրը ահելի ու ջահելի, անցորդի ու մասնակցի վրա, բերելով ուրախություն եւ առաջացանելով ծիծաղ ու հրճվանք :

«Հայարտուն» մշակույթի կենտրոնի կազմակերպիչ Նարինե Ղուշջյանի, գեղարվեստական ղեկավար Պավել Օգանեզովի, համակարգող Լեւոն Զիդիյանի եւ տեխնիկական պատասխանատու Վալերի Բադայանի ջանքերով ավանդական Վարդավառը Վիրահայոց համայնքում դարձավ իրավամբ ժողովրդական ուրախության օր:

«Հայարտուն» մշակույթի կենտրոնի «Ներսես Շնորհալի» մանկա-պատանեկան համույթի (խմբավար Մարա Աբուլյան) սիրողական պարային խմբի (պարուսույց Նարինե Ղուշջյան), մենակատարներ Նինա Կարապետյանի, Անի Ղուշջյանի, Աննա Պողոսովայի, Հենրիխ Պետրոսյանի ժողովրդական երգի-պարի կատարումները ներդաշնակվում եւ խթանում էին ժողովրդական ուրախ տրամադրությունը: Իսկ ավանդական «Քոչարին» շուրջպարի մեջ էր առնում հանդիսատեսին:

Վարդավառը իսկական ժողովրդական տոնի վերածվեց Սամցխե-Ջավախքի նահանգի հայաբնակ շրջաններում` Ախալքալաքում, Նինոծմինդայում, Ախալցխիտում: Ախալքալաքի Սբ. Խաչ եկեղեցում Վիրահայոց Թեմի Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ մատուցված կիրակնօրյա Սուրբ Պատարագից հետո , սկսվեց վարդավառյան տոնն ու ամենուրեք տարածվեց երգն ու պարը, ջրցանության ավանդական սովորությունը, ուրախություն եւ բարձր տրամադրություն ստեղծելով բնակչության շրջանում: